ԺԱ ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՄԱՅԻՍ 1906—ՎԱՌՆԱ — 32 ԹԻՒ

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւը մէկ ծրարով
Տարեկան ... 14 Ֆր.
Վեցամսեայ . . . 7 Ֆր.
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ
Ծանուցման տողը
20 սանթիմ

ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ
Rédaction du journal
„Iravounk"
VARNA (Bulgarie)
Редакция
на ВѢСТНИКЪ
„Иравунк"
ВАРНА
Գրուրիւնք ետ չեն տրուիր

ՌՈՒՍԻՈՅ ՏՈՒՄԱՅԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Բեդերսպուրկ 27 Ապրիլ

Կայսրը եւ երկու կայսրուհիք Բէթէրհօվէն հոս հասան այսօր զրահանաւով եւ Նիքօլաէվսքի կամուրջը իջան. ուրկէ կայսրը Ալէքսանտր մեծ դուքսի ընկերակցութեամբ շոգենաւակով մը Ձմեռնային պալատը գնաց. իսկ կայսրուհիք կառքերով ցամաքի ճամբով հոն գացին ։ Քաղաքը եւ Նէվայի վրայ գտնուող բոլոր նաւերը զարդարուած էին, օդն ալ պայծառ էր ։

Գահաճառին հանդիսաւոր ընթերցումը տեղի ունեցաւ Ձմեռնային պալատին մէջ ։ Կայսրը յստակ ձայնով անձամբ արտասանեց գահաճառը որ բոլոր ներկաներէն ծափահարութեամբ ընդունուեցաւ ։ Ահաւասիկ այդ գահաճառին ճիշդ թարգմանութիւնը .

«Այն խնամքը՝ զորս ես կը տածեմ հայրենիքին երջանկութեանը համար. ստիպեցին զիս հրաւիրել ռուս ազգին ընտրեալները մասնակցելու օրէնսդրական գործերու .

«Ռուսիոյ փայլուն ապագային ջերմ հաւատքով, կողջունեմ Ձեզ որ ընտրուած էք իմ թանկագին հպատակներուս մէջէն ըստ իմ հրամանիս ։ Ձեզ սպասող գործը դժուարին է եւ թանկագին ։ մեծ հաւատք ունիմ թէ ձեր դէպի հայրենիքը ունեցած սէրը եւ երկրին օգնելու ջերմ փափաքը Ձեզ պիտի ոգեւորեն ու մօտեցնեն ձեր Նըպատակին ։ Ես անվթար պիտի պահպանեմ այն հաստատութիւնները զորս հիմնեցի այն ամուր հաւատքով թէ դուք ձեր բոլոր ոյժը պիտի տաք հայրենիքի ծառայելու անձնուիրաբար, ճշդութեամբ պիտի որոշէք պէտքերը գիւղական ժողովրդեան, որ այնչափ մօտ է իմ սրտիս , պիտի հոգ տանիք ազգային մտաւոր ու նիւթական զարգացման եւ անոր բարեկեցութեան ։ Ձեզ կը յիշեցնեմ որ երկրի մը էական ուժին եւ բարօրութեան համար միայն ազատութիւնը բաւական չէ այլ նաեւ իրաւունքի վրայ հիմնուած իշխանութիւն ։ Աստուած թող լսէ իմ ջերմ բաղձանքս տեսնելու իմ ազգս երջանիկ եւ կարենալու յանձնել իմ գահաժառանգ որդւոյս հզօր , լաւ կազմակերպեալ եւ լուսաւորեալ պետութիւն մը. Աստուած թող օրհնէ ինձ սպասող գործը որուն ես ինքզինքս կը նուիրեմ Պետական Խորհուրդին եւ Պետական Տումային հետ. այս օրը յետ այսուհետեւ թող ըլլայ Ռուսիոյ մտային վերանորոգութեան ու լաւագոյն ուժերով վերածնութեան տօնական օրը ։ Ուրեմն մէկ սիրտ մէկ հոգի սկսեցէք այն գործը որուն համար ես ձեզ հրաւիրած եմ եւ արդարացուցէք ձեր Զարին եւ ազգին վստահութիւնը ։ Աստուած թող օգնէ ինձ եւ ձեզ ։ »

Նոյն օրը գահաճառէն յետոյ Տումայի անդամները հաւաքուեցան Դավրիկեան պալատին մէջ, որ յատկացուած է Տումայի նիստերուն ։ Ճամբուն վրայ հաւաքուած բիւրաւոր ժողովուրդը կը ծափահարէր երեսփոխանները եւ մոլեգին կը պոռար « ընդհանուր ներում խնդրեցէք ։»

Հանդիսաւոր աղօթքէ յետոյ Տումային անդամները իրենց տեղերը գրաւեցին . դեսպանները եւ այլոց յատուկ օթեակները լեցուն էին ։ Ժամը ճիշդ 5 ին Պետական խորհրդոյ փոխ—Նախագահ Տ. Ֆրիշ բազմեցաւ Նախագահի աթոռը եւ հետեւեալը արտասանեց ։

«Երջանիկ եմ որ կ՚ողջունեմ ռուս ազգին ընտրեալները, կայսերական կամաց համեմատ ձեր ամենուդ կը սպասէ մեծ գործը ։ Պետական Տումային հիմնական օրէնքին ուժով դուք կատարեալ իրաւունք ունիք գործելու պետութեան բարիքին համար , որովհետեւ խօսքի կատարեալ ազատութիւն ունիք ամբողջ ազգին առջեւը , որ ձեր գործերուն պիտի տեղեկանայ մամուլին միջոցաւ ։» Տ. Ֆրիշ Տումային վրայ աստուածային օգնութիւնը հայցելէն յետոյ նիստը բացուած հռչակեց եւ կարդաց երեսփոխաններու ստորագրած երդմնագիրը ։

Ցետ որոյ Նախագահ ընտրուեցաւ Մոսկուայի երեսփոխան սահմանադրական-ռամկավարական Մ. Սէրկէյ Մուրոմցէվ 436 ձայնէն 426 ձայներով։

Մ. Բէթրանքովիչ խօսք առնելով ըսաւ . « Համոզումը եւ պատիւը մեր վրայ պարտք կը դնեն յարգելու յիշատակը Ռուսիոյ ազատութեան համար իյնողներուն ։ Մենք արհաւրաբալից ճգնաժամեր անցուցինք. բայց կը յուսանք որ այլեւս արիւն չպիտի հոսի Ռուսիոյ մէջ (երկարատեւ ծափահարութիւններ) ։ Ազատ Ռուսիան կուզէ ազատութիւնը այն ամենուն որոնք կռուեցան ազատութեան համար ։»

Նախագահը յարեց . « Մե՛նք Նախամեծար պիտի համարենք սահմանադրական միապետութեան առանձնաշնորհութիւնները եւ ուժ պիտի տանք Տումայի իրաւունքներուն որ կը բղխին անոր բնութիւնէն եւ օրէնքէն »։

Նիստը փակուեցաւ. յաջորդ նիստը որոշուեցաւ ապրիլ 29 ին ։ Ժողովուրդը երեսփոխաններու դուրս ելած ժամանակ ծափահարեց եւ դարձեալ ընդհանուր ներում պահանջեց ։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասահայ թերթերէ կը քաղենք հետեւեալ լուրերը ․

ՏՓՂԻՍ Ապրիլ 18 ին, Դավիդովսկի փողոցի վրայ սպանեցին Ալէքսանդր Ցկվիտիշվիլուն, Քութայիսից փախած լրտեսին, որը Քութայիսում շատ մատնութիւններ էր արել և Թիֆլիսում շարունակում էր գործը ։

Սպանողները ազատուել են ։

—Ապրիլ 18 ին կայացաւ սահմանադրական-ռամկավար կուսակցութեան ընտրողների նախընտրական մի ժողովը, որտեղ որոշեցին Պետական Դումայի թեկնածուներ՝ իշ. Գ. Թումանեանին, Բ. Վէրմիշեանին, Ա. Խատիսեանին, Մ. Գրուզենբերգին, Գ. Գւաղավային և Ա. Քալանթարին ։ Ժողովին ներկայ էին 85 մարդ ։ Ա. Քալանթարը յայտնեց, որ նա մըտադիր չէ իր թեկնածութիւնը դնել Պետական Դումայի անդամ ընտրուելու համար ։

—Ամսիս 20 ին, ցերեկւայ մօտ 11 ժամին Բէբութովսկի և Պասկեվիչի փողոցների անկիւնում մի անյայտ մարդ յարձակւեց նախկին վաճառականական աւագ Եգօր Դաւիդովի վրայ և սրով կրծքին խփելով, տեղն ու տեղը սպանեց նրան ։ Սպանողը անյայտացաւ ։ Ասում են, որ նրանից ինչ որ մարդիկ 20,000 ր. են պահանջել և որովհետեւ նա մերժել է տալ, ուստի և սպանել են նրան ։

—Նոյն օրը երեկոյեան, 3-րդ Թումանովսկի փողոցում, իր սեփական բնակարանում սպանեց Գրիգորիյ Քարթվէլովը, որին մեղադրում էին լրտեսութեան մէջ։

ԳԱՆՁԱԿ.— Այստեղի հայերը դիմել են փոխարքային և խնդրել, որ հայերին թոյլատրուի կազմել առանձին ընտրողական ժողով ։ Իրանց այս խնդիրը նըրանք պատճառաբանում են նըրանով, որ թուրք. լիազօրների թիւը 2ուկէս անգամ աւել է հայերից և անհրաժեշտ է իրանց առանձին թեկնածու ունենալ ։

—Գեն. Մալաման, որ գնացել էր Շուշւայ գաւառում գործող պատժական զօրախմբի գործունէութիւնը քննելու, այժմ վերադարձած է Թիֆլիս ։ Քննութեան հետեւանքները առայժմ յայտնի չեն, որովհետեւ հիւանդութեան պատճառաւ դեռ զեկուցում չէ արել փոխարքային ։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

ԵՐԵՒԱՆ 15 Ապրիլ

Հնչակեան եւ դաշնակցական կազմակերպութիւնների մէջ այստեղ տեղի ունի լարուած դրութիւն ։ Մի հանգամանք, որ քիչ անհանգստութիւն չի պատճառում ժողովուրդին , կասկածելով որ կարող է մի օր առաջ գալ այդ երկուսի միջեւ մի լուրջ ընդհարում ։

Թէ ինչո՞վ են պարապած մեր ազգի «ցաւերի» մասին մտածող այդ փահլեւանները, կատարւող փաստերի առաջ միմիայն պէտք է ծիծաղել, ծիծաղել այնպէս, ինչպէս առհասարակ հեգնում են ողորմելի մարդկանց խըղճուկ արարքները ։

Ազատագրական գործ ասելով, դըրանք հասկանում են երեւի այն պօլեցիական կամ ժանդարմայական ծառայութիւնները , որոնք կատարւում են յանուն յեղափոխութեան, եւ որովհետեւ կառավարութեան բէժիմի կամքը իր կազմալուծման շնորհիւ եւ թէ զանազան մոտիվներով անկարող է լինում կատարել գողութիւնների ու սրիկայութիւնների առաջն առնել, դրանք արդէն որպէս «խպօլնիտելնի վլաստ» կատարում են բիւրակըրատիայի պակաս թողածները ։ Դնում, խուզարկում, կալանաւորում, ստրկանութեանը յանձնում , ծեծում, բանտարկում են եւ այլն եւ այլն ։ Դրանից դուրս է գալիս այն, որ եթէ Հնչակեանի ձեռքով պատժւում է մի դաշնակցական, վերջինները իրենց պրէստիժը բարձրացնելու համար , փոխարէնը ծեծում եւ վնասում են մի Հնչակեանի ։ Սրանք էլ փոխադարձը միւսներին ։ Ահա այսպիսի մանր մունր հաշիւներից , այսօր առաջ է եկել այն լարուած դրութիւնը, որի նմանը պատահեց Ղարսում, Ալէքսանդրապօլսում , այն արիւնահեղ ընդհարումը դրանց միջեւ , որ „անարգանքի կնիք է դրօշմում յեղափո-

խական կոչող կազմ-ի ճակատին։

Ոչ մի բարոյական կապ չի մոտեցնում այդ երկու կազմակերպութիւններին իրար մոտ որպէս քաղաքական կուսակցութիւններ, դրանց ընկերակցութիւնից ի վեր խօսքի, մամուլի եւ ծրագրային հաժողմունքների ոչ մի ագիտացիա եւ բանակռիւ չի եղել՝ մտաւոր խաղաղ վիճաբանական հողի վրայ. այլ իրար հայհոյել, բամբասել, չափել ֆիզիքապէս եւ յայտարարել իրար դէմ ասիական մի «բոյկոտ». Բոյկոտ-իրա հետ հաշիւ ունենալու, իրար հետ սեղան նստելու, գիւղերում նոյն իսկ իրար հալածելու, բռնի կերպով դաւանափոխ անելու, միմեանցից առ ու ծախս չանելու եւ այլն եւ այլն։

Որ դաշնակցութիւնը միշտ ժխտել է Հնչակեան կուսակցութեան գոյութիւնը, որ բայօնական ժողովում թխած մի օրէնքով որոշել են ոչ մի յարաբերութիւն չունենալ Հնչակեան կազմի հետ՝ դա փաստ է. փաստ է եւ այն, որ նա հռոմէական բարձրութիւնից է նայել միւսների վրայ եւ ամեն կերպ աշխատել բռնի միջոցներով ձուլել ամենքին. տեղի են ունեցել խմբական ծեծ ու «զինուորական դրութիւն յայտարարել» Հնչակեանների դէմ. Արտաշ... Փար-ի Աղեա... ի դէպքերը դեռ թարմ են, երբ Հնչակեան մարդիկ չաբաթներով փախչում էին իրանց տնից տեղից, կամ դռները փակած, օրերով չէին կարողանում տանից դուրս գալ։ Այս բոլորը ամփոփում են իրանց մէջ այնպիսի մութ եւ զազրելի փաստեր, որոնք ծնել են ժողովրդի մէջ մի խուլ զայրոյթ, բայց եւ զսպած, բիւրոկրատիայից աւելի ճնշող՝ այդ յեղափոխականների մագիլների մէջ։

Այո՛, գրում ենք, դեռ քաշւում էլ ենք աւելին գրել, որովհետեւ եթէ բիւրոկրատիան խօսքի ազատութիւնը ճնշում է բանտի չորս պատերի մէջ, դրանք նոյնն են ընում բռունցքով եւ խէնջարի ծայրը ցոյց տալով, եւ անսպասելի չէ մեզ համար, որ կարող ենք վայելել այդ բանը մեր խօսքի ազատութեան համար։

Այսօր նոյն անհանգիստ դրութիւնը այդ պարոնները ստեղծում են եւ մեր մէջ. ապահով չենք, որ կարող է խաղաղացնել, եւ իրաւունք ունենք էլ անհանգիստ լինելու, քանի որ առանց այն էլ «չէյթանը» ամեն օր նոր պրովակացիաներ է շպրտում փողոց՝ ծեծ ու ջարդ ստեղծելու համար, եւ արդեօք այդ ընդհարումը մի փառաւոր ծառայութիւն չէ՞ մատուցանելու չէյթանին, դա պրովակացիա պատրաստել չէ՞

Բաւական է, պարոններ, բացատրեցէք խնդրեմ, ի՞նչ է ձեր գործը. ի՞նչի համար է, ի՞նչն է ձեր սկզբունքը. միմեանց ծեծելը, բռունցքամարտը փահլեւանութիւնը յեղափոխականի վայել գործ չէ. դուք հրապարակ էք եկել միմեանց դէմ, որպէս կուսող օպոզիցիանե՞ր թէ ինչ. իրար գզելուց բացի ինչո՞վ էք պարապած, բացատրեցէք ի՞նչ է ձեր գործը...։

(ԿԱՑՍ) Ռ. Նար.

* * *

Ղարաբաղի շրջանի մէջ Հնչակեանների և Դաշնակցականների միջեւ տեղի ունեցած ընդհարումը հետեւեալ պատճառներից է առաջացած։— Զանգեզուրի Խրնձորեակ գիւղը Հնչակեան կազմակերպութեան մէջն է լինում։ Դաշնակցականները, և Հայ-Թաթարական խռովութիւնները մասամբ վերջանում են, սկսում են կպչել հայ գիւղերին և նրանց արիւնաքամ անել։ Գիւղերի վրայ որոշ հարկեր են նշանակում եւ բռնի զինուորական ոյժով հաւաքում։ Խնձորեսկի վրայ էլ հարկ են դնում, եւ բացի դրանից ըսպառնում են թէ ինչո՛ւ Հնչակեաններ են։ Մարտի սկիզբներից 300-ի չափ դաշնակցական ձիաւոր զինուորներ գրոհ են տալիս այդ գիւղի վրայ, բարձրացրած «մահ կամ ազատութիւն» մակագրով դրօշակ։ Հնչակեանները սկզբում կարծում են թէ յարձակում գործողները թուրքեր են, ուստի գրաւում են դիրքեր, զէնքով դիմաւորելու, բայց շուտով պարզւում է որ դաշնակցականներ են։ Հնչակեանների կողմից Պատգամաւորներ են գնում, որ իմանան նրանց նպատակը, դաշնակցականները խօսում են կոպտաբար, ՀԱՐԿ են պահանջում եւ սպառնում։ Մագում է խռովութիւն, սկսում են միմեանց վրայ հրացաններ պարպել։ Հնչակեանները դիրքերից դուրս են գալիս, շրջապատում են դաշնակցականներին, 40 հոգի գերի են վերցնում, մէկ մասին զինաթափ անում և միւսներին փախցնում։ Դաշնակցականները իրենց երեւանի եւ Ղարսի խմբերը ուղարկում են այն կողմերը. Հնչակեան նոր էլ են գնում։ Ցաւալի է եւ շատ ցաւալի դաշնակցականների պաշիպօզուդութիւնները, էն էլ ներկայ պարագաների մէջ։

«Եր. Հայաստան»

ԳՆԴԱՊԵՏ ԵԱՆՔՈՎ

Քանի մը շաբաթներէ ի վեր յաջորդաբար հաստատուող ու հերքուող սեւ լուրը վերջնականապէս հաստատուեցաւ եւ ամբողջ պուլկար ազգին սիրտը թախիծով պատեց ու վրէժխնդրութեամբ լեցուց. այդ գնդապետ Եանքովի Մակեդոնիոյ մէջ թուրքերէ սպաննուելուն բօթն էր։

Եանքով սովորական հայդուկ մը կամ արկածախնդիր ու պատահական ֆէդայի մը չէր. նա իր գնդապետի բարձր աստիճանէն եւ 1000 ֆր.-ի չափ ամսաթոշակէն հրաժարած ու ընտանիքը եւ զաւակները ձգելով հայրենիքի փրկութեան գործին նուիրուած մեծ հայրենասէր մըն էր։ Անոր հայրենանուէր կեանքին գլխաւոր գծերը հոս թուենք համառօտակի.

Գնդապետ Եանքով ծնած է Մակեդոնիոյ Բօսթուր գաւառի Զակորչանի գիւղը։ 1875—76 թուականներուն Բօսթուրի գաւառին մէջ պուլկարական զարթնումի ճառագայթները ծագած՝ ազգային գիտակցութեան այդ եռուզեռուքին Եանքով 16 տարեկան պատանի, կը մեկնի Պոլիս պուլկարական վարժարանի մէջ ուսանելու։

Երկար չմնար հոն։ Հէրսէկովինայի ապստամբութեան դրօշը պարզուած, Պուլկարիոյ մէջ ազատագրական շարժումը եւս աւելի յստակ կը նշմարուէր ու թրքո-սրպական պատերազմը եզրին վրայ կը գտնուէր։ Եանքով մէկ կողմ կը նետէ գիրքերն ու կերթայ կը միանայ Սերպիոյ մէջ պուլկար կամաւորներու խմբի մը ու Շալիկովցի եւ Ճունիսի արիւնոտ կռիւներուն երիտասարդ հայդուկը անվեհեր քաջութեան գործնական ապացոյցները ցոյց կուտայ։ Կը հասնի Ռուսո-թրքական պատերազմը. Եանքով Շիփքայի բարձունքներուն պաշտպանութեան յիշատակելի կռիւներուն կը մասնակցի պուլկար կամաւորներու 5 դդ. խումբին մէջ ու Շէյնովայի մօտ կը վիրաւորուի։

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ՓԱՐԻՊ ԱԽՊԷՐ...

(Շար. նախորդ թիւէն)

Ե.

Արդարեւ, կէս օրէն ետքը ծերունին առաջնորդեց իր նորեկ սպասաւորն ա՛ն փողոցներն, ուր կը գտնուէին յաճախորդներու ապարանքը ու տուները։ Մէկիկ մէկիկ ցոյց տուաւ ու աւելցուց.

—Երբ դուռին չշակը կը քաշ՛ս, կարելի եղածին չափ ուժգին հնչեցուր ու մէկ անգամէն կեցի՛ր. յաճախորդներս կը հասկնան թէ կաթ բերողն է եւ կուգան կառնեն։ Նայէ որ պատուով վերաբերուիս անոնց հետ ու երբ դուռը բանալու կուգան, դուն երեսդ մէկդի դարձուր ու անանկ յանձնէ կաթդ։

—Խիստ լա՛ւ. այդպէս կընեմ, շեշտեց Կարիպ Ախպէր։

Ներուկին խրատներուն համաձայն՝ տարաբաղդ Կարիպ սկսաւ մէկ երկու ամիս կաթ տանիլ. բայց կիսաբաց դուռին ետեւէն խօսող թրքուհիներու ձայնէն ո՛եւ է նշանակութիւն մը չիմացաւ։ Ամեն ատեն Զէքի պէյին տպասրանքին համար կաթ առնող կինը պառաւ մըն էր... ձայնին խռպոտ արտայայտութենէն կը հասկնար։

Անցան ութն ամիսներ...։ Կարիպ Ախպէր առտու մը, երբ սովորականին պէս կաթ տալու կեցած էր Զէքի պէյի դուռը. յանկարծ պառաւի ձայնին տեղ քնքոյշ ու կանացի գողտրիկ ձայն մը լսեց որ ոկրսէր.

—Ա՛խ, երանի սա կաթնավաճառին... անիկա տրեւը կը տեսնէ...։

Ու այս մենախօսութիւնը հայերէն լեզուով կը կատարուեր։

Ե բ լսեց ան, Կարիպ Ախպէր զգաց որ իր չուրջը ամէն բան կը մթնար։ Ի՞նչ ընէր... ձայն տա՞ր... բանա՞ր դուռը։

Չ'էր գիտեր... չ'էր գիտեր։

Կաթին ճոտանքը թողուց սեմին վրայ ու չը կրցաւ շշակը հնչեցունել։ Սպասեց որ այդ հայերէն արտասանութիւնն անգամ մըն ալ լսէր... բայց անօգուտ տե՛ղ. ո՛եւ է ձայն մը չեկաւ իր ականջին։ Ան ատեն շշակը քաշեց ու կաթը տալէն ետքը մեկնեցաւ։

—Կրո՛ղ... ի՞նչ ընեմ... ինչպէ՞ս պիտի կրնամ ազատել աղջիկս, որ աշխարհքս վրայ միակ յոյսս մնացեր է ինծի, բացագանչեց Կարիպ Ախպէր։ Այս անիծեալ սպարանքին դուռը չի պիտի բացուի ինծի պէս ողորմելի ծառայի մը աղջին, հետեւաբար զաւակիս երեսը տեսնելու կարօտէն պիտի մեռնիմ։ Տեսնե՛մ, եթէ վաղն ալ այդ ձայնը լսեմ, ան ատեն իր անունը կուտամ ու կը խօսիմ հետը... վերջապէս կը յայտնեմ որ իր հա՛յրն եմ...։

Դիշերը չկրցաւ քնանալ։ Առտուն ուղղակի ապարանքին առջեւէն անցաւ ու դուռին քովը սպասեց։ Քիչ յետոյ լսեց ձայն մը որ կը մենախօսէր.

—Ա՛խ, Աստուա՛ծ, գթա՛ վրաս... ես իմ լոյս հաւատքէն չեմ ելած... սպաննելու ըլլան զիս, նորէն չեմ ընդունիր։ Ահա՛ ամեն օր կաղօթեմ քեզի...։

Կարիպ Ախպէր դողդղալով մրմնջեց.

—Վարսենի՛կ, Վարսենի՛կ...

Բայց իր ձայնին պատասխան մը չառաւ. հետեւաբար նորէն կրկնեց.

—Վարսենի՛կ, հա՛յ եմ... մի վախնար... եթէ քովդ մէկը չկայ, խօսէ՛ հետս։

Ապարանքին մեծ դուռին վրայ պզտիկ լուսամուտ մը կար, որուն շրջանակը հաստ երկաթէ ձողերով ամրացած էր ու կրկնափեղկով մը ծածկուած էր։

Մանկամարդ աղջիկը կիսաբաց ընելով՝ վանդակապատին փեղկը. երկիւղալի նայուածքով մը դուրս նայեցաւ։

Հազիւ տասներեք տարու կար. ձուաձեւ դէմք մ'ունէր, որուն վրայ, լուսնի տրտմալի շողը կաթած էր կարծես. իսկ ցանուցիր ծամերը, մեծ ու յանկուցիչ աչքերը, գողտրիկ բերանը, այս բոլորը վրձինով մը քաշուած էր։

—Ո՛հ, հեռացի՛ր... եթէ վաղը քիչ մը շուտով գաս, կրնամ խօսիլ՝ դողդղաց աղջիկն ու վար առաւ հարեւաններու յատուկ կրկնափեղկը։

Կարիպ Ախպէր՝ թաղին քանի մը յաճախորդներուն կաթ տալէն ետքը, վերադարձաւ ու Զէքի պէյի ապարանքին դուռը ջալեց, այն տեղ ալ կաթ տուաւ ու գնաց ախոռը։

Ցուզուա՛ծ էր... գոյնը մեռելի գոյն մը դարձած էր ու ոտքի վրայ կենալու ուժ չունէր։

Ախոռին տէրը հոն չէր. մինակ մընաց ու կուշտ մը լացաւ իր խղճալի ու միանգամայն անողոք ճակատագրին վրայ։

Ի՞նչ միջոց գտնէր իր աղջիկն այդ անկումէն ազատելու համար։ Զէքի պէյ զինուորական մըն էր ու մեծ ազդեցութիւն մ'ունէր բոլոր շրջանակներուն մէջ...։ Ա՛խ, եթէ յանկարծ կասկածով մը մատնուելու ըլլային ինքն ու մանկամարդ աղջիկն, անկից ետքը կորսուած էին երկուքն ալ...։

Այսպէս տարուբերուեցաւ իր հոգւոյն ու էութեան բովանդակ գալարումներուն հետ, ինչպէս ալեկոծ ծովուն մէջ ինկած մարդ մը, որ ոգորելով եզր մը նետուելու կ'աշխատի։

Դիշերն անցաւ։ Կարիպ Ախպէր առտուան մթնշաղին՝ առաւ կաթն ու Զէքի պէյի ապարանքը գնաց։

Դուռին չը մօտեցած՝ լսեց որ վանդակապատին կրկնափեղկը կը բացուէր։ Սպասե՛ց...։

—Ա՛խ, հայ ես դուն, անանկ չէ՞... մրմնջեց պատուհանէն ձայն մը ու զըլուխը դուրս հանեց։

—Այո՛... հայ ե՛մ... դողդղաց Կարիպ Ախպէր։

—Երդուիր ըրէ՛ որ չի մատնես զիս։

—Կերդնո՛ւմ...։

(Շարունակելի)

Պատերազմը վերջանալէ յետոյ կը մտնէ Սոֆիայի զինուորական վարժարանը, որուն շրջանը աւարտելով պուլկար բանակին մէջ ծառայութեան կը մտնէ ու 1885 ին սրպօ-պուլկարական կռուին կը մասնակցի ։

Մակեդոնական յեղափոխական շարժմանց մէջ մեծ մասնակցութիւն կունենայ Եանքով ։ 1896 ին երկար շրջան մը կընէ Մակեդոնիոյ մէջ ծանօթանալու համար ժողովրդեան հոգեկան վիճակին ։ Մակեդոնիայէն վերադառնալէ յետոյ այլեւս ինքզինքը ամբողջովին կը նուիրէ անոր ազատութեան գործին ։ 1901 ին կը նետէ զինուորական համազգեստը աւելի ազատօրէն կարենալ գործելու համար ու 1902 ին ապստամբական խմբի մը գլուխ անցած կանցնի իր ծննդավայր երկիրը։ 1903ի ընդհանուր ապստամբութեան ատեն իր խումբը կը՞գործէ Փիրինի ու Ռազլօգի շրջանին մէջ, ուր ցոյց տուած քաջագործութիւնները օտար թղթակիցներու հիացումը գրաւած են ։

Ապստամբութենէ մինչեւ այսօր իր կեանքի մեծ մասը Մակեդոնիոյ մէջ անցուցած է, իրեն յանձնուած շրջաններուն մէջ կազմակերպումի գործով զբաղած եւ որուն զոհ գնաց վերջապէս ։

Ինչպէս ի Սոֆիա եւ այլուր նոյնպէս ալ Վառնայի պուլկար եկեղեցւոյն մէջ կիրակի օր հոգեհանգստեան հանդիսաւոր արարողութիւն կատարուեցաւ, եւ յետ աւարտման ժամերգութեանց ժողովրդեան խուռն բազմութիւն մը հաւաքուելով քաղաքապետութեան հրապարակը, ատենախօսութիւններ եղան եւ պուլկար ու հայ յեղափոխականներու կողմէ պսակներ բերուեցան ի յարգանս հանգուցեալոյն յիշատակին ։ Փաստաբան Տ. Քընէվ առաջարկեց խնդրել քաղաքապետութենէն որ այդ Մուսալլայի հրապարակը «Եանքով հրապարակ» կոչուի. ներկայ ժողովուրդը սիրով ընդունեց այդ առաջարկը ու «կեցցէ Պուլկարիա» աղաղակելով ցրուեցաւ ։

Յարգա՛նք հայրենիքի ազատութեան համար բոլոր զոհուողներու յիշատակին ։

ՊԱՐՈՆ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

Զարմանալի բան, ամէն անգամ որ խնդիրը վարժապետներուն շուրջը կը դառնայ, անոնք երբեք վրանին չեն առներ, կարծես թէ իրենց համար չէ որ կը խօսուի ։

Բայց այս անգամ խնդիրը բոլորովին տարբեր է ։ Ես պիտի հարցունեմ Պարոն վարժապետներուն թէ ի՞նչ է իրենց պարտականութիւնը հանդէպ տղայոց եւ դպրոցին. ասիկայ կարծես երբեք չեն հասկցած եւ չեն ուզեր ալ հասկընալ մեր պ. վարժապետները ։

Վարժապետին պարտականութիւննէ տ,ղայոց հետ անուշութեամբ վարուիլ, եւ երկրորդ ուսուցանելու եղանակը գիտնալ, փա՛ռք Աստուծոյ մեր պ. վարժապետները ո՛չ այս ունին եւ ոչ միւսը. (բացառութիւնները յարգելի են) եւ կը վարուին աշակերտին հետ ինչպէս տէր մը իր ծառային հետ ։ Բայց չարաչար կը սխալին պարոններ, որովհետեւ կարելի է այդ մատաղ սերունդէն ալ յառաջիկային ուսուցիչներ ելլան, եւ անոնք ալ իրենց տեսածին պէս վարուին իրենց աշակերտներուն հետ։ Բայց խնդիրը այսպէսով չը վերջանար, քանի որ մենք բնական օրինօք ազգին ապագան մեր մատաղ սերունդէն կսպասենք, իրաւունք ունինք իբրեւ հայ անհատ մեր դիտողութիւններն ընելու ։ Նաեւ սա ալ ըսեմ թէ ծեծը գրեթէ կէս դարէ ի վեր վարժարաններէն բոլորովին վերցուած է, այսու հանդերձ դեռ մեր վարժապետներուն մէջ գոյութիւն ունի, եւ երբեք հեռանալու ալ միտք չունի, քանի որ մեր վարժապետներուն մեծ մասը դեռ պէտք եղած ուսումնասիրութիւնը չեն ըրած իրենց կոչումին նկատմամբ. վարժապետը աշակերտը ծեծելով բան մը չը շահիր, ոչ ալ բան մը սորվեցունել եւ ոչ ալ պէտք եղած կրթութիւնը տալ. ընդհակառակը աշակերտը քանի մը անգամ ծեծ ուտելով երես կելլէ եւ կսկսի պատասխաններ տալ, լրբանալ եւ եթէ տարիքով ալ մեծ ըլլայ այն ժամանակ խնդիրը տարբեր հանգամանք ալ կառնէ ։

Վարժապետ մը պարտաւորէ տեղին համեմատ վարուիլ աշակերտին հետ, խաղի մէջ խաղալու է եւ դասի ժամուն ալ դաս տալու է, եւ ոչ թէ ամէն ժամանակ միեւնոյն դիրքի մէջ խիստ կամ մեղմ մնալ, քանի որ երկուքն ալ եթէ չափազանցութեան հասնին իրենց վնասները կունենան։ Նաեւ դասը չի հասկցած կամ չի գիտցած ըլլալուն համար ծանր պատիժներ տալ կամ ծեծել բոլորովին հակառակ է մանկավարժական նոր դրութեան ։

Անցնինք հիմայ բուն խնդրին ։ Տեղւոյս վարժարանի ուսուցիչներէն մէկը ճիշդ վերը պատկերացուցածիս պէս գիրք մը բռնած է հանդէպ երկսեռ աշակերտաց, չախել, պոռալ, ծեծել եւ ծանր պատիժներու ենթարկել, ասոնք եղած են իր գործերը ։ Արդեօք չը մտածեր պարոնը թէ, անոնք ալ ծնողք ունին որք կրնան ուզած կերպովին վարուիլ իրեն հետ ։ (*)

Այս մասին արդէն կիմանանք թէ մասնաւոր դիմումներ եղած են Պատ. Հոգաբարձութեան, եւ սակայն ինչպէս կերեւի, այդ մասնաւոր դիմումները անլսելի մնացած են, ասոր համար պարտք զգացի սոյն երկտողովս հրապարակաւ հրաւիրել Պատ. Հոգաբարձութեան լուրջ ուշադրութիւնը մասնաւորապէս աշակերտներուն հետ կոպտաբար վարուող ուսուցչին վրայ. հակառակ պարագային ժողովուրդն ալ գիտէ՞ իր հետ խաղացողին հետ խաղալ։

ՇԱՒՕ

Վառնա 1906 Մայիս 2

(*) Դիտ. Խմբ.— Ծնողներն ալ իրաւունք չունին իրենց ուզած կերպովը վարուիլ վարժապետին կամ վարժարանին հետ. ծնողները իրենց քուէներով այդ իրաւունքը Հոգաբարձութեան յանձնած են ։

ԴԵՐԱՍԱՆ Կ. ԳԱԼՖԱԵԱՆ

Դերասան Տ. Կարապետ Գալֆաեան՝ որ ամուսնացած էր քանի մը ամիս առաջ Ռուսճուգի մէջ, վերջին օրերս իր տիկնոջ հետ Պուգրէշ գացած ու «Համլէթ» ներկայացուցած է ։ Տեղւոյն Լա Ռումանի թերթը կը վկայէ թէ «Տիար և Տիկին Գալֆաեան խիստ փայլուն յաջողութիւն մը ունեցած են և ծափահարուած բարձր արուեստագէտներու կողմէ։»

Տ. Գալֆաեան Համլէթը հայերէն ներկայացնելէ յետոյ քանի մը ընտիր կտորներ արտասանած է ֆրանսերէն լեզուաւ. այս մասին նոյն թերթը կը յաւելու «խիստ հաճելի սիւրբրիզ մը եղաւ լսել ֆրանսական քաղցըր լեզուն՝ շատ յստակ և գրեթէ առանց օտար շեշտի՝ հայերէն կոշտ լեզուին վարժուած շրթներէ ։ Եւ մենք կրնանք շնորհաւորել Տիար և Տիկին Գալֆաեանը իրենց լաւ տաղանդին և մեծ յաջողութեանը համար ։»

Օտար մամուլի կողմէ մեր ազգակցին նուիրուած այս տողերը մեզ կը հրճուեցնեն, բայց սա ալ ըսենք թէ Լա Ռումանի ի պ. խմբագիրը կը սխալի երբ հայերէնը կոշտ լեզու կանուանէ. իր այդ խօսքով ցոյց կուտայ թէ հայ լեզուին վրայ ինք բնաւ գաղափար չունի ու իր կարծիքը կազմած է Դանուբի եզերքը աշխատող կարգ մը հայ գիւղացիներու աղաւաղեալ առոգանութիւններէն ։ Կը սպասենք որ Տ. Գալֆաեան խնամքը ունենայ պ. խմբագիրին այդ սխալը շտկել տալու ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի Գ. Թեւը կառուցանել տալէ զատ Ցակոբեանները 1000 ոսկիի չափ գումար մըն ալ տրամադրելի ըրած են նոյն թեւի կահաւորման հիւանդանոցի վերաբերեալ ամեն պիտոյքներով ։

Ինչպէս Ցակոբեաններու նոյնպէս ալ Կիւլպէնկեան և Ունճեան Տեարց բաժիններու շինութիւնը ևս արագօրէն առաջ կը տարուի, Եկեղեցւոյ կառուցումն ալ բաւական առաջացեր է ։ Այս բոլոր շինութեանց վրայ կը հսկէ անձնուիրաբար Տիար Գէորգ Ասլանեան ։

—Էջմիածնայ Սինոդը յաւելումներ ըրած է վանքին պաշտօնեաներուն և գաւառական առաջնորդներուն թոշակներուն վրայ ։ Սինոդի անդամներուն թոշակը բարձրացած է 720 ական ռուպլիի, Աստրխանի, Բիշնէվի և Ցփղիսի առաջնորդներուն տարեթոշակները բարձրացած են 3500 ական ռուպլիի, Շուշիի, Շամախի և Երեւանի առաջնորդներունը 2400 ականի ։

—Պոլսոյ թերթերուն մէջ կը կարդանք թէ Պատրիարքարանը Կրէտէի հոգեւոր հովիւ կարգեր է կրկին Տէր Գէորգ քհն. Հիւրմիւզեանը ։ Կրէտացիք այդ տերտերին չահատակութիւններէն զզուած եկեղեցի յաճախելէ իսկ հրաժարած էին անցեալ տարի ։ Չենք հասկնար թէ Պատրիարքարանը զանի կրկին Կրէտէ ղրկելով լա՞ւ գործ մը կատարած ըլլալ կը կարծէ, թէ կուզէ իր այդ կարգադրութեամբ հասկցնել որ ժողովուրդի արդար բողոքներուն ականջ տալ չուզեր ։

—Ուսումնական խորհուրդը Պոլսոյ թաղային վարժարաններու 1905--1906 տարւոյ վիճակացոյցը պատրաստած ըլլալով հրատարակութեան տուած է ։ Ըստ այդ վիճակացոյցին մայրաքաղաքի ազգ. վարժարաններու մէջ 5651 երկսեռ ուսանող կայ, որոնց 3221ը մանչ և 2230ը աղջիկ։ Ուսուցիչներու (երկսեռ) թիւը 316 ։ 42 ազգ. վարժարաններու համար ամսական 85,655 ղրշ. ծախք կըրթայ, որուն 53,444ը եկեղեցիներու սնտուկներէն կը վճարուի, 30,644ը աշակերտաց թոշակներէ և 1565 ղրշ.ը նուէրներէ ու գանձանակներէ կը գոյանայ ։

—Այս տարի Զատկի կիրակի օրը Երուսաղէմի մէջ հայ ուխտաւորներու թիւը միայն 715 եղած է. արդիւքն ալ բաղդատաբար քիչ է եղեր ։

—«Լուսաբեր»ի մէջ կը կարդանք.

«Աղեքսանդրիայէն կը հաղորդեն թէ Կիրակի օրը ժամերգութեան միջոցին ժողովրդին կողմանէ Խնամակալութեան դէմ կատարուած ցոյցերու հետեւանքով Գեր. Առաջնորդ Հայրը ջղային սաստիկ անհանգստութեան մը ենթարկուած և հիւանդանոց փոխադրուած է ։

Կառավարութիւնը հարկ տեսած է առժամապէս փակել Առաջնորդարանի սենեակները ։

Մանրամասնութիւնք յաջորդիւ ։

ՏՕՊՐԻՉԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵՆԷՆ

Պատ. Խմբագրութիւն Իրաւունք ազգօգուտ լրագրոյ ։

Քաղաքիս պուլկար հարուստներէն Տիար Բայքօ Զօնչէֆ, մեր ազգ. վարժարանին (100) հարիւր ֆրանգ նուիրած ըլլալով՝ հոգաբարձութիւնս ընկերակցութեամբ պատ. Թաղ. խորհրդոյ մի քանի անդամոց եւ արժ. տէր Ներսէս հայր Ղոնչէկիւլեանի, տիար Բայքօ Զօնչէֆի տունը գնաց ազգին կողմէ շնորհակալութիւն յայտնելու եւ մեծ ընդունելութիւն գտաւ ։

Արժ. Տէր Ներսէս հայր հակիրճ բանախօսութեամբ մը ազգին կողմէ շնորհակալութիւն յայտնելով գովեց բարերարին մարդասիրական զգացումները, որուն պատասխանելով տիար Բայքօ Զօնչէվ ըսաւ թէ, «Հայ ազգը երախտագէտ եւ քաղաքակրթուած ազգ մը ըլլալը կապացուցանէք շատ փոքր նուէրի մը համար կենցաղագիտական օրէնքները յարգելով»։ Ուստի հոգաբարձութիւնս պարտք կը համարի հրապարակաւ ալ շնորհակալութիւն յայտնել տիար Բայքօ Զօնչէվի. եւ այս առթիւ աներկբայ եմք որ պատ. խմբագրութիւնդ պիտի հաճի ներկայս ասպնջականել իւր թերթին մէջ ։

Ի Դիմաց Հոգաբարձութեան Մամիկոնեան Վարժարանին.

Ատենադպիր — Ատենապետ

Կ. Պօղոսեան — Հճր. Կ. Քհն. Սարգիս

30 Ապրիլ 1906

ՀԱՎՍՏԻՍԱԹ

ԹԻՒՐՔԻԱ

Սահիպի իգթիտար վէզիրլէրտէն Ատալար վալիսի Ապիտին բաշա պիր պուշուգ սէնէ էվվէլ պիր շիւբհէ իլէ Սթանպօլա կէթիրիլմիշ իսի· շիմտի Սթանպօլտան պիլտիրիլտիկի իւզրէ մէրգում բաշա պիր Արնավուտ էլի իլէ Եըլտըզտա էօլտիւրիւլմիշ։ Թիւրքիա կազէթալարը Ապիտին բաշա ֆիտճէթէն վէֆաթ իթտի տէյօրլար։

—Սթանպօլ 27 ապրիլ— Մըսըր սինօրը մէսէլէսի իչիւն Եըլտըզտա հէր կիւն վիւքէլա մէճլիսի թօբլանիյօր։ Արապ Իզզէթ բաշա վէ պաշգա պիր թագըմլարը Ինկիլթէրայա գարշը գօյմադ թավսիյէ իտէյօրլար։ Թիւրքլէր մուգավէմէթ իչիւն չու սէպէպլէրի կէօսթէրիյօրլար։ Պիրինճի՝ Մըսըր հիւքիմէթի թապա իլէ պէրապէր պիւթիւն թարի Ինա եարըմ-ատասընը վէ Ագիպէ քէօրֆէզինի զապթ իթմէք իսթէյօր։ պու քէօրֆէզտէ 100 ատէտ գատար վարօր վէ կէմի հրֆզ օլընապիլիր, վէ օրասը Մըսըր էյալէթի վէ՝ Սուէզ պօղազը իչիւն մուհիմ վէ մէօհքէմ պիր մէվգը տըր։ քէզա Ագիպէ մէվգըսը Հիճազ չըմէնտը ֆէրի իլէ պաղլանաճագ տըր։

Սուլթան Հիճազ չըմէնտըֆէրինէ միւնասիպէթի օլան պու նօզթայը Ինկիլիզլէրին էլինէ պըրագմագտան գօրգիյօր։ Ինկիլթէրանը թէչվիգի իլէ էկէր Խըտիվ քէնտիսինի Խալիֆէ իլան իտէր իսէ, ասը Արապլարը տախի անընէ պիրլէշմէսի բէք գօլայ օլաճաղընտան տօլայը Եըլտըզ քէօշկիւնտէ տիւշիւնիլիյօր։ Մէքքէ Էմիրի տախի Խըտիվին Խալիֆէլիկինի թաստիգ իտէճէք իմիշ։

Ցէյլի բէլէկրաֆ ըն իշարընա պինաէն, պու մէսէլէի Սուլթան պայնէլմիլէլ պիր գօնֆէրանսա իհալէ իթմէք իսթէր իմիշ։ Հիճազ չըմէնտըֆէրինի տախի Ագապէ իլէ պիրլէշտիրէճէք օլան շէօպէնին ինշասը պէօյիւկ զայրէթլէ թիւրքլէր իլէրի կէօթիւրիյօրլար։

—Սթանպօլ— Սուլթան թապա մէսէլէսինտէ Ինկիլթէրանը Թալէպլէրինի իճրա իտէմէյէճէկինտէն պու մէսէլէյէ Իթալիանը միւտախէլէ իթմէսինի բէճա իթմիշ տիր։

—Վիէննա— «Վ. Ցայթ.» կազէթանը մէվսուգ մահէլտէն ալտըգր մալիմաթա պինաէն, Պապը Ալի Ինկիլիզ իւլթիմաթումը-նը սօն նօզթասընը գապուլ իթմէյէճէք Ինկիլթէրա հիւքիմէթի իսէ իսթէտիկլէրինի Թիւրքիայա գապուլ իթտիրմէք իչիւն սօն տէրէճէ ինատ վէ ըսրար իթմէկէ գարար վէրմիշ տիր։ Պու սէպէպլէ Թիւրքիատա ահվալ տահա պօզուլաճագ տէյիւ գօրգուլիյօր։

—Սթանպօլ—Պապը Ալի Մըսըր սինօրը մէսէլէսինտէ Ինկիլթէրանը թէքլիֆլէրինինպիր գըսմընը գապուլ իթտի։

—Մըսըրըն սինօր մէսէլէսինտէն տօլայը ալընան սօն հավատիսլէր Թիւրքիանը պաշ էյմէկէ պաշլատըլընը պիլտիրիյօրլար։ Իւլթիմաթումըն 10 կիւնիւ խիթամ պուլմասընա պիր կիւն գալարագ Սատրազամ վէ խարիճիէ նազըրը Ինկիլիզ էլչիսինէ կիտուպ մէսէլէի պիր գօրմիսիօնըն թէտգըգընա իհալէ էյլէմէք թէքլիֆ իտէրլէր։ Էլչի Ինկիլթէրա քէնտի իտտասընընը պիր նօգթասընտան վազ կէչմէյէճէկինի սէօյլէր։ Բաշալար քէտերլի ճէվապը Եըլտըզա պիլտիրիրլէր։ Սուլթան քէնտի թարաֆընտան նէճիպ Մէլհամէ բաշայը կէօնտէրիր։ ֆագաթ էլչի՝ պու մէսէլէտէ Մէլհամէնին իչի օլմատըզընը պէյանլէ անը գապուլ իթմէզ։

ՏԱԽԻԼԻ

Սօֆիանընը Միր նամ «նարօտնեագ» բարթիսինին օրկանը վիւքէլա ըէյիսի Ռայչօ Բէթրովը վէ հարպիյէ նազըրը ժէնէրալ Ստովովը միւրթէքիպ կէօսթէրմիշ օլտըզընտան տօլայը, Միր ին մուհարբիրի տավայա վէրիլմիշ իտի։ Սօֆիա մահքէմէսի Միր ին եազտըզը իֆթիրա ատտ իտուպ, մուհարբիրինի 1 այ զընտան մահպուսընա վէ 200 ֆր. ճէզաի նագտիյէ վէ մահքէմէ մէսարիֆլէրինի էօտէմէկէ վէ պու հիւքմի Միրտէ վէ Վէյէրնա Բոշքա կազէթասընտա նէշր իթտիրմէկէ մահքիմ իթտի։

Միր ին մուհարբիրի մէսուլը Վասիլ Խրիսթով իսթինաֆ իտէճէք տիր։

—Ֆէխամ· Բրէնս Ֆէրտինանտ հազրէթլէրի, պիրատէրի Բրէնս Ֆիլիպ վէ մէսաֆիրլէրի օլան շէլիզվիխ հէօլթէն տիւք վէ տիւշէսի իլէ պէրապէր Ֆիլիպէյէ վասըլ օլուպ, էն էվվէլ կաթոլիկլէրին քիլիսէսինէ կիտէրէք՝ միւթէվէֆա բրէնսէս Մարիա Լուիզանընը մէզարընը զիյարէթ իթթիլէր, սօնրա պուլկար վէ ռում քիլիսէլէրինէ տախի զիյարէթլէ թըրէնի մախսուսլէ Սօֆիայա ազիմէթ էյլէտիլէր։ կարատա վիւքէլա վէ ումէրա վէ զապիթա բրէնսլէրի գարշըլատըլար։

ՌՈՒՍԻԱ

Բէթերսպուրկտան ապրիլ 30 թարիխլի պիր թէլէկրաֆա պինաէն, Բօբ կաբօն Բէթերսպուրկա եագընը Օզէրքի նամ քէօյիւն պիր քէօշկիւնտէ ասըլը պուլընմուշ տըր։

Բօբ կաբօնընը Գրէտի Լիօնէ պանգա չէօպէսինտէ պիր սանտըճաղը օլտըզը իշիտիլուպ, միւտտաի ումումի վէ միւսթանթիգ մէզքիւր պանգայա կիտէրէք թաստիգ իթմիշլէր քի Բօբ Կաբօնընը նագընթ 28,500 բուպլիսի օրատա մահֆուզ ըմըշ։

—Տումա աշըմըշ օլուպ, հէր թարաֆտան թէպրիգ թէլէկրաֆլարը ըէյիսէ վիրուտ իտէյօր։ Ռուսիանընը միւթէաատիտ հապսհանէլէրտէն մահպուսլար տախի պա թէլէկրաֆ Տումանընը քիւշատընը թէպրիգ իթմիշլէր տիր։

Բէթերսպուրկ պէլէտիյէսի Տումանընը աշըմասը միւնասիպէթիլէ զիյնէթ ու զիյաֆէթ էյլէմէք թէքլիֆինտէ պուլընը իսէտէ, Տումա՝ աֆվը ումումի իլան օլընմատըգճա՝ հիչ պիր զիյնէթ ու շէնլիկ գապուլ իտէմէյէճէկինի պիլտիրտի։ Ֆինլանտիա Տիէթի (մէպուսան մէճլիսի) վէ Գարատաղ բրէնսի տախի թէպրիգ թէլէկրաֆլարը վէրմիշլէր։

—Թիֆլիս 30 ապրիլ—Բօլիսիա պիր պօմպա ֆապրիգասը պուլոը, տէրուընինտէ էքսէրիսի տօլու 200 պօմպա պուլընմըշ տըր։

—Ռուսիանընը Ինկիլթէրա իլէ տօսթլաշմասընա Վիթթէ վէ Լամըստօրֆ շալըշմըշ վէ մուվաֆագիյէթ հասըլ իթմիշօլտըգլարընը Քէօլնիշէ Ցայրուռնկ եազիյօր։

ՄԻԹԷՆԷՎԻԷ

Տրէյֆիս մէսէլէսի թէքքար Ֆրանսըզլարընը ֆիքրինի իշղալ իթմէկէ պաշլատը մուհաքէմէսի Բարիզին մահքէմէսի թէմիզինտէ յունիս այընտա իճրա օլընաճագ տըր, միւտաֆաա վէքիլի Մ. Մօրնարտ յունիս 25,26 վէ 27 տէ միւտաֆաա նութգընը իրատ իտէճէք տիր։

—Բարիզտէ կէչէն հաֆթա պուլընան պօմպալարընը կրանտիւք Ալէքսանարը էօլտիւրմէք իչիւն հազրրլանտըզը բէվայէթ օլինիյօր։ Բարիստէն պիր չօգ անարշիսթլէր իխրաճ իտիլմիշ տիրլէր։

—Ալման իմբէրաթօրընընը քէօշքլէրի վէ սէրայը էթրաֆընտա անարշիսթլէր թութուլմուշ վէ պօմպա վէ տինամիթ իշարէթլէրի կէօրիւնմիշ։ Հատէ՝ տէ՝ . . . ։

ԹԻՒՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 3 Մայիս

ԶԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՑ

Վակօն	54–60 լիպ.	9.30/ 10. 40
Արապա	52–62 լիպ.	9. /11. 20

ԱՐԲԱ,

Վակօն	100 քիլօ	11. /11.40
Արապա	42–47 լիպ.	7. / 7. 20
ԵՈՒԼԱՑ արապա	33/36 լպ.	4. 40/5.
ՖԱՄՈՒԼԵԱ. արապա	100 քիլօ	20—21
ՌԱԲԻՑԱ	100	եօգ
Արապա	100 քիլօ	եօգ
ՏԱՐԸ տրապա		–.10/11. 20
ԲՕԼՕԶ արապա	55–60 լպ.	11./12.
ՄԻՍԻՐ	57–58 լպ. արապա	7. /7.40
»	100 քիլօ	10.20 /10.40
ԶԱՎՏԱՐ արապա		7. 80/8.
»	100 քիլօ	1.250/13.—

Կիւնտէ 8—10 վակօն վէ 30—40 արապա կէլմէքտէ. վակօն մուամէլէսի նարօլէօն 20 ֆր. արապա մուամէլէսի նարօլէօն 20. 20

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա բիսցասընտա պագգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթուն ֆրանք իլէ։

ԳԱՀՎԷ	2.10/ 2.25
ՇԷՔԻՐ նէմցէ	.80
ՇԷՔԻՐ քէսմէ՝ սանտըգ	41.
ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը	42.
» Ֆիլիպէ »	36.
» Ինկիլիզ »	29. 50
Բիզոն »	49.
ԿԱԶ Սանտըղը	11.
ՋԷՑԹԻՆ հաղը քիլօ	1./1. 10
ԳՈՒՐՈՒ իւզիւմ	25
Եումուրթա 100 ատէթի	4. 60

Le Courrier Europe'en

Ֆրանսերէն այս շաբաթաթերթը՝ որ կը զբաղի քաղաքական, այժմէական եւ ընկերվարական խնդիրներով ու գրականութեամբ եւ մանաւանդ իրեն սկզբունք ընտրած է ճնշուած ժողովուրդներու իրաւունքին պաշտպանութիւնը, կը հրատարակուի Փրոանսայի ոստանին մէջ գրագէտներու խմբակի մը վարչութեան տակ եւ բազմաթիւ աշխատակիցներու մասնակցութեամբ։

Բաժնեգինն է տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 ֆր։ Բաժանորդագրուիլ ուզողը կրնայ իր գտնուած քաղաքի նամակատան վարչութեան կամ խմբագրութեան սա հասցէին դիմել՝

280 Boulevard Raspail,
(Paris)

ԸՆՏԻՐ ՔԱՑԱԽ

Զուտ խաղողէ պատրաստուած բնական քացախի նորահաստատ մեր ֆթիրանոցը առիթ կընծայէ յարգոյ հասարակութեան որ ասկէ յետոյ զերծ մընայ խարդախել այլ եւ այլ դեղերով պատրաստուած կեղծ քացախներու վընասներէն։ Մեր քացախին անարատութիւնը եւ ազդեցութիւնը ամէն երաշխիք կընծայէ իր առողջութեան նախանձախնդիր յաճախորդին, որ անգամ մը փորձելով արդէն հաստատած պիտի ըլլայ գերազանցութիւնը։

Դուրսէն մեծաքանակ յանձնարարութիւնք փութով կը գործադրուին ի հարկին նմոյշ ղրկելով։

Հասցէ՝ ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍԱՊԵԱՆ
Դ. թաղ փողոց Գալանի թիւ 65 ՎԱՌՆԱ

Одговорникъ А. Курбетиянъ
ъеп пинат а Д. Тодоровъ и С-ие—Варна